

« Պիթնուս պահեն, այն տունն հրամանած
և Աստուծոյ դիւց չի մտանեն, ասեն, թէ սպի-
ռ տակ Պիթնումներն հրեշտակաց նման են,
« թէ այդպէս է պարա չէ սպիտակ Պիթ-
ռ ուուն զենել. թէ ոք զենէ՞ ըստակին և իւր
ընտանեացն և իւր տղայոցն զեն հասցը-
ռ և նէ... թէ ոք որ սովորութիւն անէ Պիթ-
ռ ուուգին միսն շատ ուսէ, մասն և մուրտուն
և թափի շուտով: թէ ոք փորն խոստուկ լինի՞
« Պիթնուսին միսն չորցընեն, Մազի (պղոր)՝
և Առւմազ (աղաոր) միաշափ խաննեն
« խմցնեն ջրով, խալսի, և խոստուկն կտրէ,
« Աստուծով »: Այս նկարազութենէս գու-
շակուք որ Պիթնուսզ վայրի հաւուկ կամ
Արդորն ըլլայ. արդէն Եղինք այ ասմկօրէն
Բիշինեու կոչեն զԱրդորն կամ զԱրազաղն:
— Յիշեմք հոս և զՑեղենէկէ թռչունն,
որ ըստ վիտոնց Թօւրբաց՝ է Որի կամ Ու-
րուք, փո. Մնառ, բայց Արահամմ Արազի
յարմար ստորագրէ. « Պինա բաշէիս (արդար)
« թռչուն է ի մէջ թռչնոց », կ'ըսէ. ի հնուց
ի վիր Արազին կ'ընծայուի Արգար կոչում:

Շարայարելի



Ն Ո Ր

Ա Կ Ե Խ Ո Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ի Կ Ո Վ Կ Ա Ս

Հնախօսական եւ Ազգաբանական

Հ Ա Յ Յ Ա Ր

ՀՈՒՆԴԱՐԱՑԻՑ ազնիւ կումս Եւգինէսս
Զիշի ձանապարհորդելով դնէս ի կովկաս և ի
կեղրունական Ասիս, — իրը արդիշնը իշր
ձանապարհորդուրեկան, — ի լոյս ընծայած
և անցեալ տարբայն մէկ, հունգարեկն և
զաղիերեկն շնորհերով երկու ատուար հա-
տորներ¹ (էջ 1-620), մաքուր և զնսիր
տպացրուրեամբ, զարդարուած 150 փորա-
զիր զատ զատ տախտակներով (planche)
և բազմարի պատկերներով իշջ մէջ. ո-
րոնք իր ներկայացնեն տնական, երկրագոր-
ծական և այլ պկապկն հնախօսական աս-
տրկաներ: Այս հրատարակուրեանն առաջին
հատորոյն մէջ բաշական երկարուեկն և հնու-
րեկն ցրած և հեղինակն, նայն հունգարական
ազգի ժաղարականուրեան պատմութիւնը, և
ի մասնաւորի նկարագրած է իշր Զիշի²
տոհմի ցեղարանուրեան հնորիշնը: Յետոյ
նաեւ տեղեկուրիշներ կու տայ ի կովկաս
և ի կեղրունական Ասիս բնակող ժողովը-
ոց ազգային պատմուրեան, անոնց բարոց,
սովորութիւն և գրականուրեան վերաբերեաւ

1. Անցեալ ասրէ աղնիւ Հեղինակն այց-
ելեավ է վանս մեր, իւր ձեռամբ նաւից մեր
գրաստան օրինակ մի այս ճոխաղարդ երկհա-
տորներու.

2. Տցի կամ Zygii աւաղակաբարոյ աղջ մի
յափունս Գոնսասի և ի կովկաս. կոչուեր են ի
թունաց Zygrian, իւր Զիրուրեանք կամ Շի-
կրեանք, Ծըկրեանք, գուցէ և Ծկոյրք:

մանրամասնորեանց վերայ: Բայց երկասիրութեան առելի կարեւոր և ճնշագրքրահան մասը կը կազմեն կուն Զիյիի ըրած հաւաքածույթը ազգագրական (*ethnographique*) և հնահոսական առարկայից, որոնք արդիւնք են 1880 բուսականի ի վեր գաղ-

դիացի, գերմանացի և ուստի գիտնականաց ձեռոց եղած պեղմանց ի կովկաս և Հայաստանի այլ և այլ կողմեր, և մանաւանդ յԱրշակոր (Արշեաց Բաղր զաւարին մէջ):

Այս ձեր հաւաքածույթն Զիյի կունեն նուիրած և Հովհաննեաց Ազգային Թանգարակին,



Comte Eugène de Lichy

ԵԿԵԿՆԻՈՍ ԶԻՒԴ ԿՈՄՄ ՀՈՒՆԳԱՐԱՑԻ

զոր խնամքով դասաւորած և հնարագրած և նկարագրած և հնագույքն, Յովհաննէս Եղանը՝ ազգագրական մասը, և Պաստա Բելա՝ հնահոսական մասը:

Կուն Զիյիի ներկաց գրութեան ուժով և հնութեան փոքրիկ մաշակ մի տաղու համար, առելորդ լենք համարիր Հայաստանի և

Հայոց վրայ տուած տեղեկութիւնները բարգմանելով գևանելի Բաղմանութիւն սիմակաց մէջ. րկակն մէջ Հայոց համար՝ լիս շատ եռութիւն մի իր տուած տեղեկութեանց մէջ, սակայն և այնպէս յուսամք, թէ ախործով կարդացուի իրուս օտարազգույթ մի գրութիւն։ Նմանապէս, զանց լենք ըներ համառուիւ

յիշառակել, վերջերս մոռաւաճայատառի մի քանի տեղուանքը կառարաւած պեղմունքը, և յերեւան եկած քանի մը կոր ասարկայքը, բայ Զիյիի տռաժ տեղեկութեան:

Հ. Ե. Ա.

Վոզնասոր Հայոց թիհն է գրեթէ 780,000: Սոցա մեծ մասն (52 %) կը բնակի Երեւանու նահանգին մէջ, իսկ մատցեաքն ցրուած են կարսի, Շուշիի, Գանձակի (Եղիսաբէթապղի), Շամախու և Բարգու վիճակաց մէջ: Անսցմէ զատ փոքրիկ խմբեր եւս կը գոտուին Տփիսիս նահանգին, Անդրկալովասեան քաղաքաց, հիւսիսային կողլասու և մանաւանդ Մողղոկ, Խոզլիար և Նոր Արմաւիր քաղաքաց մէջ: սակայն ասոնց բովանդակութիւնն կազմուած է զանազան յեղանակաց մէջ: Օսմանեան Հայատանի մէջ կան (4,000,000 – 4,500,000) Հայք, և Պարսկաստան (100,000), Ալևորիա-Հունգարիա (16,000), Ալգրիէ (500) և ի Բիրիստանական Հնդկաստան (5000):

Ասորիք և Հրեայք Ռւրաբու (== Աւրոր) կը կոչեն զՀայո, Յոյնիք (Հերոզոտոս) Ալարոզի կ'անուաննեն զանոնք, Պարսիկը ալ Արմինա: իսկ ինքեւանք կը կոչենք Հայք կամ Հայկազննք, բայ իրենց խորհրդականուր Հայկ նախահօր, զոր համարին Ծննդոց վրոց մէջ յիշեալ թորովոմ որդիք: որ խոյ ատաղլ թէլ թագաւորի բռնութենէն՝ իր ժողովորդը տարա զէպ ի հիւսիս և բնակեցան Հայաստանի մէջ, Հայկայ յաշորաց մէջ եղած է մի ուն Արմենակ անուամբ, և իր անսնը տուած այս ժողովրեան: և ուրիշ մ'ալլ, այսինքն Արա Գեղեցիկն, զոր կը ջանար իրեն որսալ Շամիրամ թագուհին: ի սկզբան, Հայաստան Ասրբեստանայց իշխանութեան ներբեւ էր, յետոյ ընկճուեցա ի ձեռն Մեծին Ալեքսանդրի: սակայն Միհըրդաստայ օրով՝ ստոյք մեծ աէրութիւն մ'էր ընդ իշխանութեամբ Տփիքանայ, յետոյ Հոսվայեցիք և Պարթեւք մարտնչելով անկախ Հայաստանի հետ՝ իրենց իշխանութեան մէջ ամփոփեցին: յամին 444, Տրայխանու հոռովեական զաւառ մի կազմեց զՀայատանա:

այլ յամին 447 Աղբիանոս վերսակին իրեն զարձուց իւր ազատամթիւնը, զոր և կը պահանջեւ մինչեւ ցամն 232, ընդ իշխանութեամբ Արշակունեաց: Ապա ուրծմ ենթարկուեցաւ բատական ժամանակ Սասանեան իշխանութեան ներբեւ: Գ գարու կիսուն ընդունեացն Հայք զըքրիստոնէութիւն և Հոսովմէական պետպանեան պաշտպանութիւնը խնդրեցին ընդունեմ Պարսից, բայց ի զոր վասն զի յամին 387 իրենց թագաւորութիւնն բաժնուեցաւ ընդ մէջ Բիւզանդացոց և Պարսից: Պարսիային մասն այսպէտ մնաց մինչեւ ցամն 636, և յետոյ անցաւ ի ձեռն խալիխայից, որոնց պահպանեցին զայն մինչեւ ցամն 885: Եթեոյ, մինչեւ ժԱ զար՝ ոստիկաններ ու նեցաւ և իր անկախութիւնն տեւեց մինչեւ ժԴ զար: Այս թուականէս վերը՝ Հայաստան կ'ենթարկուի անկերջանալի արշաւանց, զարհուրեցի խանանձազան բազմութեան զօրաց Լէնկմիմուրի, Քերքբրու, Պարսից և Թուրքիւնաց, որը հետզետէ միմեեանց կը յաշորգեն: Եւ այսուհեաւ այս երկիրը համեմատութեամբ խաղաղ կեանք կրցաւ անենալ, այն ժամանակ միայն՝ երբ յամին 1829 և 1878 բաժնուեցաւ նա ընդ մէջ Ռուսիոյ և Թուրքաց:

Հայք ի վազուց կը բնակին ի կոմիսանոյնպէս արածուած են Տպաղբանի մէջ, որոյ կը վկայեն պարսիկ, յայն և հայ ժամանակակիրք, ինչպէս նաեւ Գարբանափ հայկական ճարտարապետութեան յիշխանութիւն: Հայոց ամրովշական գաղթականութիւնըն ի կոլիխա և ի Վրաստան ոկասած են յետ խաչակրաց, ի ժԴ զարու, որ է ըսել՝ Հայաստանի թագաւորութեան անկմանէն յետոյ: ՄԵԽՆ Պետրոս նպաստաներ շնորհեց զաղթեաց, և զաղթականութիւնն շղաղբեցան մինչեւ ցարու վասն զի Հայք ուրիշ բան չէին իրնա զորեր բայց միայն հանգաստութիւն, որ և բոլորովին ապահովուեցաւ թուսաց պետութեան:

Հայք կը խօսին հնդկագերմանական լեզու մի, սասաւիկ իստանուած պարսկական ճայնասորներով. ժողովրդական լեզուն կը տարբերի հին հայերեւնէն, որ այժմ եկեղեցական պաշտամնանց համար զործածուող

շեղու մի դարձած է, այսպէս որ արդի զրա-
կանութիւնն կը գարբանաց ժողովրդական
լեզուի հման վերայ: Հիմա հայկական զրա-
կանութիւնն ուրց յիշատակներն քրիստոնէա-
կան թռականի մինչեւ և զարը կ'ելնեն՝
շատ ճիփ է, մասնաւորապէս պատմական
երկասիրութիւններով: Արդի հայերենի զրա-
կանական առաջին փոքրերն կը սկսին ձգ-
դարէն: Հայերէն լեզուն ունի բազմամիտէ
գաւառապարբառներ, որք՝ սակայն կը բաժ-
նուին յերկու, արեւմտեան – արեւելեան և
կովկասեան բարբառներ: Հայերէն զրու-
թիւնն կամ առակերն զրծածուած են սկսեալ
յամէ 402:

Հայկական ցեղի մարդարանական գծագրու-
թիւնն են. աշքն և մազերն շատ սեւ,
զափին բարձր, բարորաձեւ, փորիկ և երկայն
(*hypercératrichicephale*), քիթն ուզիդ, զրե-
թէ կորսնթարդ բոլորս ծայրով, երեսն մի-
ջակ լայնութեամբ, հասակն միջակէն աւելի
բարձր. զինոյ յետակոյմ և ծայրն արտես-
տական տաձեւութիւն մ'ունին, որ և զի-
տուած է 70% մարդկանց վերաց. բայց այս
քի կ'երեւի առ կանայս: Եղիկոս զնոնցը
անդամաշաբական գործողութիւններ կատա-
րելով 47 անհատից վրայ՝ յառաջ բերած
են հետեւեալ նշանակները. զինոյն 85. 17
և 85. 68. 86. 58. 87. 17 և 87. 7
երեսին, 62. 85. 63. 50 և 65. 05 քիթ:

Գալով Հայոց կրօնքին՝ իրենց կը պասւին
այն ժողովրդոց մէջ որը ասածին եղած են
զրիխասնէութիւն ընդունելու. սկզբան կա-
թողիկեսյը կի՞ բայց յետո արեմն հնր-
ծուած մը յարուցանելով կը բանուին թէ՛
հովովէական կաթողիկէներէն և թէ յունա-
ծէս ուղղափառներէն, իրենց հայկական ազ-
գային եկեղեցի մը հաստատելով, որոյ զատին
է կաթողիկոսն, — զոր կ'ընտրէ ժողովուրդն
եպիկոսաց միջէն, — և որոյ աթօնն է յէջմիածին, Արարատ լերան մատ:

Հայերն հանճարեղ, յարասեւոյ, ֆաւա-
սէր, ոչխատասէր մարզիկ են, և միանգա-
մայն զիւրատ. հետեւող յառաջադիմութեան
զրագացմանց և զարափարօց. շափականց յա-
ջողակութիւնն մ'ունին վաճառականութեան:
իրենց վարժ մտառաւթիւնն իրենց անխօնչ

զրծօնէութեան հետ միանալով՝ տեւական
զիւրութիւնն և հաստատուած զարգացմոց մի
կու այ իրենց կոլիկասի մէջ ունեցած նշա-
նակութեան և ազդեցութեան: իրենց ըն-
տաեկան կերպն կերպուած է կնքով հաւա-
տարմութեան, որ միանգամայն ճշգրիւ կը
յայտնէ անոնց ինչ ըլլաշի՝ իրենց կրօնա-
կան կենաց մէջ և առ ժողովրդական սովո-
րյթան ոգնեցած մեծարանքը: իրենց միշտ
առևկասեականց եղած են, խորշելով ցեղ
ցեղի մէջ ու և է խարութիւն դնելէն:

Տակածն նահապետական կեանք մի կ'ան-
ցունեն ընսանեաց մէջ, որը կ'ունենան 20
–40 անձինց, և կը կառավարուին երկաւ-
գունի կամ ցիյոն մի առաջնորդութեամբ, որոյ
հեղինակութիւնը միշտ կը յարգէ ընտանեաց
իրացանչիր անուան: Մեծաւ մասամբ եր-
կրագործ են. միայն քաղաքացիք կը պա-
րագին ձեռագործական արտեսափ և վաճա-
ռականութեամբ: Ծներն կարգագրուած են
թուրքաց բնակարաններուն ոճու. որոց մէջ
չկայ նրատեսի բան մի բաց ի թոնիրէն,
որ կաեղէն ստուար և բարձր տակսում մ'է,
սենեկի յատակին մէջ փորուած. վարի կողմէ
բոլինանի ծակ մը կայ ուսկից կրակը կը
վառեն. ծակին վրայ՝ վերի կողմէն կը գրտ-
նուի խաչերկաթն, որուն վրայ կը զրուի
կաթսան, լցուած եփուելիք կերասիրով: Հայոց
կերակորսն շատ համբաւաւոր է, մանաւանդ
իրենց խմորեղէնքն և քաղցրաւենիքն (*cont-*
fitures):

Այս մարդկանց տարապն կը նմանի լե-
հացոց տարագին, այն կերպոյ միայն որ եր-
կուցն ալ արեւելեան ծագում մ'ունին. հա-
գուստանին է սպիտակ կտաւէ շապիկ մը, սեւ
տարատ մը՝ զօսիով կտագուած, ոսքիրուն
սեւ մոճանիներ, շափի վրայէն ալ սեւ սնգու-
սէ (*sattén*) բանկոն մի, կուրծքի վրայի մասն
բաց և սպիտակ թաշկինակով մի (*ficché*)
սեղմնաւծ. զգեստն սեւ չուխայէ արիալիի
մ'է՛ (ինչպայի նման, օպիտալ) բարձր օձե-
քով, ետեւէն ծալքերով, առջեւէն ալ կոճակ-
ներով ամփոփուած, զուկը կը զնէ փափախ
մը՝ ծայրը պաստառէ: Սակայն այս զիւզաց-
ուոյն տարազն է. քաղաքացին կամ հարուստ
զիւզացին՝ աւելի նուրբ պատառներ կը զօրծ-

ածէ. արխալլին պատած է շոխայով, գումարելի լայն է, և ճոխ զարդարաւած ոսկով և արծաթով. իւր կապոյս կամ սեւ տարածն լայն է և զարդածեւ հանգոյով մը կապուած ծնկան վրայ. Կօշիկն բոլորովին եւրոպական է :

Հանանց տարագներն զգնզգոյն են և զոհարազարդ. բայց աւելի հոգ կը տանինս սորտ իրենց զիխարիկն (coiffure)՝ զոր վրացիներէն առած են : Սպիտակ կտակ շազկի և շալվարի վրայէն կը հագուին բանկոն մի՝ զոր և կը կապէն ճոխ զօսուով մի. կարմիր կամ կանաչ մետաքսէ արխալլու մը՝ որ կարուած է խալարի (khalar) ձեռով, սպիտակ աստառով, և վերջապէս թքական պաստառներով շոխայ. սորերնուն կը հագուին գունաւոր զորպաններ, կարմիր հողաթափներ՝ առանց կրունկի. ամէն զուրս ալ կը գործածեն կարմիր կամ կանաչ մանակ: Վրայի զիխարիկն ճախարար զարդարուած է զրամերու կամ մարգարիներու շարքերով և ծածկուած երկու քօղերով (fichus), վարի կողմի փողոցին կը պլասի պարանոցին չօրս կողմը. (Նոր ամուսնացած հազան թբանը կը ծածկէ այս քօղով, հրաման չունի իւր ընտանեաց հետ խօսելու մինչեւ իւր անդամնիկ որդուոյն ծնունդը), իսկ վերի կողմի քօղն կ'ի՞նէ ի վայր մինչեւ կրունկն :

Հայկական հնարանութեան նկատմամբ կ'իմացընէ կամն Զիյի հետեւեալ աեղեկութիւնները :

Գանիրէի թանգարանին աեսու և զաղղիական պետութեան նուրբակն Յ. Մորգան, փորելով Ռուսահյաստանի և Ճիխիսու հարաւողմը զանուող խէլպան-ատղի (Kheletan-tagh), Ալիոլայի և Մուշիրի (Mouschirer) գերեզմանցները, իւր ըրած գիւտերը հրատարակեց հետեւեալ վերնազրով. Ո Գիտական ուղեւորութիւն ի կալվաս: Հնահոսական և պատմական ուսումնակիրութիւնը» (Պարիս 1889): Մի և նայն ժամանակ նաեւ Հ. Բրուց (H. Brugsh), Վ. Բելկ և Ե. Ռեսուլը գիւտականք փորեցին գիւտարակի, Գալարէնաի, կէօք-ատղի (Gogdaiia), Գարա-մարտասի, Ռէգէին-Լակիրի (Redkin-Lager), Հելենէնպորֆի, Ցաթեւու վանքին,

Օհշուչայի (Okhitchoutchaï), Մեղրիի, Խարապայի, Պաշ-Գառնիի, Աղեքսանդրապոլի, Արշամորի, Խօճալիի (Khodjali), Խանքէնտի և կիւլապլուի շրջակայքը, և իրենց զիտագութիւնները կամ տեղեկութիւններ հրատարակեցին զերմաներէն և Ազգախօսական օրաթերթին մէջ¹ » այլ և այլ վերնազրութ:

*

Հանար զաղղիացին աեսած է ի կովկաս բազմաթիւ բնական կամ արուեստական քարայրներ, որոնք յերկարանից կը համարուին նորաբարի (πέολιθήνως) զարուց մարգկան բնակարան կամ գերեզմաններ, ինչպէս որ այս բանս ստուգուած է ուրիշ գաւառներու մէջ. բայց Հանար կը յաւելու, թէ մինչեւ ցարդ ոչ մի հնախօսական զիւտ եղած չէ, որ ապացուցանէ մեզ, թէ այս քարայրներս այդ հնաստակի ծառայած և միանգամայն վերոյիշեալ յեղանակի գործեր եղած ըլլան: Մայկան հնաւանականն այն է, որ այս քարայրներուս մեծ մասն ծառայած ըլլան ո՛չ թէ իրեւ դորմէն (dolmen) կոչուած կարկառներ, այլ իրեւ բնակարան մետաղանասից, որոնք հին ժամանակաց հետէ շահաբեր բած են այս երկիրներու մէջ զուուղ աղի, պղնձի և երկաթի հարսուս հանցերը: իսկ Պայէն կ'ըսէ, թէ ասոնք բազմաթիւ հայկական քարայրներ ըլլան և իրը բնակառներ ծառայած խալիբներու (Khalibé), որոց մետաղանանութեան մէջ ունեցած նարաւար յաջուղաթիւնը՝ յիշատակած են նաեւ չումերու և Հերուղուոս: Դիւրուա Մոնակերուց՝ կողդ անունը — որ Հայաստանի երեց հանցային տեղեաց կը սրուի — կը նմանցընէ խալիբ անուան, և կ'ըսէ, թէ Ալազան զիտի անունն խալիբներու դրացի Հայիզոնիկ ժողովրեան անունէն յառաջ եկած է:

*

Կովկասու մէջ ոչ մի տեղ զտնուած չէ տակաւին ո՛չ զուտ անազ և ոչ այ անազային հանք մի, թէպէտեւ Ա. Ալծրունին՝

Վիրիսովի խնդրանքը շատ հետազոտած է այս
բանն թէ տեղեաց և թէ զրոց մէջ : Արդ,
անագն կը բերուէր Պարսկաստանէն և
մանաւանդ՝ ըստ Վիրիսովի՝ խորասանէն :

Սասոյդ է, թէ մօսերու վ. թելի զտա Գառ-
լաբէնաի գերեզմանացին մէջ զուա անադէ խալ-
խալայ (anneau de jambé) մի. նմանապէս
սպիտակագոյն մետաղեայ զար մ'այլ զրա-
նուած է Ալլաձարի գերեզմանացին մէջ, որ
հաւանորէն անադէ է. բայց այս առարկայքը ս
կրնան ըլլալ միայն իրբեւ անհարթ անադ
(étain brut) :

*

Ալլաձարի գերեզմանաստեղեաց մէջ զըս-
նուած են պղնձեայ գեղարդունք, որոց բոնի
կամ կոթի Փատորին ծայրն պատուած է
պղնձալի : Այս գեղարդունքս ունին կարճ թի-
թեղներ և երկայն կոթաներ (douilles)
որոնք — պատկերաց ցուցածին համեմաս
— գալարմամբ շինուած են և ոչ թէ ձուլ-
մամբ : Դարձեալ, զտնուած են յԱլլաձար
պղնձի օզակներ կամ մանեակներ կեռածեւ
եղերօց, անասնայ զիսի կերպարանօք : Ըստ
Վիրիսովի, ասոնք կը զործածուէին աղեղ-
ներու լարերը պրկելու համար : Նյոյն Ալ-
լաձարի գերեզմանաստեղոյ մի մէջ զըս-
նուած երեք կծկած կմաքրներու զլիոց վե-
րայ զտնուած են կիսազնաձեւ սաղաւարտ-
ներ՝ կոնածեւ կմակներով : Վ. թելկ կը
տարակուսի ասոնց սաղաւարտ լինելուն
վրայ, սակայն Ծէօլէր կ'ըսէ, թէ այս
կարծուած սաղաւարտներն առաջին շշափ-
մամբ փշրեցան, որով կ'ապացուցուի, թէ
ասոնք ամենանուրք թիթեղներով շինուած
ըլլան : — Ծէօլէր ուրիշ նորագիւտ սա-
ղաւարտի մ'այլ նկարագիրը կ'ընէ, դար-
ձեալ այս եւս կիսազնաձեւ, զէսի ծովրակը
ունենալով թիթեղ մի, երեքթեւեան զարգ-
մանակով վեր բարձրացած, և զիսոյն վերայ
յոլազ մի ձեւացուցած : Այս ոսով եօթը
հաս սաղաւարտներ եւս զտնուած կարծուին
Սախսըլլան լերան վրայ, Գօլատակ կոյսած
Հայոց զիսի մը զիմանց, ձեամբ վահանայ
ցատեան, որ ՄԵծարանց ~ Ս. Յակոբյ
վանքին հայ արեղաներէն մին է :

*
Գարձեալ, Ալլաձարի մէջ զտնուած են այլ
և այլ առարկաներ, ինչպէս կացիններ, երկ-
ժանիններ, պերճազարդ զօտիններ մարդու և
անասնոյ կերպարանօք, զարգմանակներ,
հայելիններ և այլն, զորս աւելորդ կը հա-
մարինք մանրամասն նկարագրել. փափաքողդք
կարող են փնտուել զայնս Հեղինակին եր-
կասիրութեան մէջ, միայն չմոռանանք ըսելու,
որ այս զտնուած բոլոր առարկայքն՝ երկա-
թեղէն զարու զործք են :

— 5 —

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՔ

ՈՒՍԱՆՈՂԱՑ

ՄՈՒՐԱՏ-ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ

ՊԱԴՈՒԱՑԻ

ՊԱԴՈՒԱՑԻ արքունի Համալսարանին
քննութիւններ երկու շվան անին. առաջինն՝
ամառային, ուսումնական տարեշրջանի տ-
արատման ասեն, իսկ երկրորդն՝ աշնանային,
յաջորդ ուսումնական տարեց շրջանն սկսելէն
առաջ. վերջինն կ'աւարաի նոյեմբերի կէսին :

Հշնանային շրջանի ժամանակի կը ներկա-
յանան այն աշակերտք՝ որը կամ ամառային
շրջանի ասեն շեն ներկայացած, և կամ
ներկայանալով՝ անյաջող քննութեան ենթ-
արկուած են :

Այս մէկ ճիւղի մասնագիտական ուսման
քննիչ յանձնախումբը կը կազմուի երեք ան-
զամենք, որոց մին քննելի նիւթին ուսու-
ցիլը կը լինի, իսկ միս երկուը Համա-
լսարանի ընկհանրական ցեղէն կը նշանա-
կուին :